անհաւանական է որ Հայերն այս կողմերում վանք ունեցած լինէին.„ (Es wird wohl ein nestorianisches Kloster gewcsen sein, da es unwahrscheinlich ist, dass Armenier in dieser Gegend ein Kloster gehabt haben sollten,) բայց այն ժամանակ դեռ յայտնի չէր տապանաքարի հայերէն արձ. գոյութիւնը. իսկ այժմ կատալոնեան քարտէզի ցուցումը կարող է եւ ճիշդ լինել[1]։ Բաց ի սորանից Վարդանին վերագրած աշխարհագրութիւնը Միջին Ասիայի քրիստոնեաների մասին խօսելիս, հաղորդում է հետեւեալ տեղեկութիւնը. (S. Martin, Mém. histor. et géogr. sur l'Arm. II. p. 436՝ բնագիրը, եւ էջ 437. Ֆրանսերէն թրգմ. եւ պետերբուրգի կայսր. համալսարանի մատենադ. ձեռագ.) "Իսկ ի կողմանէ Պարսից սկսեալ յարեւելից նախ Չին ու Մաչին եւ Խաթա քաղաքն եւ աշխարհն, որ է գլուխ բոլոր աշխարհին եւ են ուղղափառ քրիստոնեայք եւ ունին թագաւորութիւն եւ քահանայութիւն. ունին արդար դատաստան եւ ճշմարտութիւն, ոչ որբն լայ եւ ոչ այրին ողբոց հանէ. եւ ունին գիրք միայն զՄատթէոս-գլուխ աւետարանն եւ պարարտ է աշխարհն, բարեխառն եւ բարելի, մի անգամ սերմանեն եւ Գ. տարի հաց լինի, քանզի մօտ է դրախտին, անտի գայ ամբարն եւ անուշահոտ ծաղկունքն՝ դեղ զանազան ցաւոց։„

Հայոց Ս. Մատթէոս եկեղեցու անունը, որ մտցրած է եւ կատալոնեան քարտէզը, թերեւս, բացատրուի նորանով, որ Մատթէոս աւետարանիչը մեծ յարգ ունէր հեռաւոր Արեւելքի այդ քրիստոնեաների աչքում։ Մեր քաղուածքում ոչինչ ակնարկութիւն չկայ Հայոց մասին, բայց երեւում է, որ հայ պատմագիրը յիշած քրիստոնեաներին իրեն հաւատակից է համարում, որովհետեւ նոցա անուանում է "ուղղափառ„։

Ն. Մ.

# ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

## ՀԱՏԱԿՈՏՈՐՔ ԵՒՍԵԲԵԱՅ ԵԿՂ. ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Վերջին օրերս բարեկամներէս մին՝ խաւրած էր ինձ երեք մագաղաթեայ թուղթ, էջ 6՝ եւ կամ 12 սիւնակ։ Մեծութիւնն է 35×25 հարիւրորդամէթր. հին երկաթագրով գրուած, երկսիւնակ, իւրաքանչիւր սիւնակն ունի 27 տող։ Վերնագիրք փոքր երկաթագրով են։[2] Միտ դնել կու տանք ուղղագրական մասերուն, որք գրչութեան հնութեան ապացոյց կրնան ըլլալ. զ. օ. ԲԷ. յայտնէին, էին, կէսօրէս. եւն։

Բարեկամս կը գրէ ինձ թէ "զասոնք՝ հին, մաշած, քայքայած, մեծաւ մասամբ թղթերն կորսուած, եւ վերջապէս բոլորովին անգործածելի վիճակի հասած Յոյսմասուրբէ մը երկու կողքերուն մէջէն հանած է։„ Շատ շնորհակալութեամբ ընդունեցայ բարեկամիս՝ ինձ համար՝ այս անգին նուէրն։

Թուեցաւ ինձ՝ թէ ասոնք հատակոտորք են Եւսեբիոսի եկեղեցական պատմութեան,* բայց դժբախտաբար նոյն պատմութիւնն աչքի յառաջ չունենալով չկրցայ բաղդատել։ Իբր հետաքրքրական ինչ, ընդօրինակելով ձեզ կը խաւրեմ, պատուական Հանդէս Ամսօրեայի մէջ ի հրատարակութիւն։ Ընդօրինակութիւնն ըրած եմ հաւատարմաբար։ Տ. Վ. Գ.

Կեսարիա, 25 Հոկտեմբեր, 1894:

[1] Այստեղ կարելի էր յիշել, իբրեւ ծանօթութիւն, որ Թիւպրիկ Ճանապարհորդը վկայում է այդ եկեղեցու գոյութեան մասին, ինչպէս յիշուած է Հ. Ալիշանի Սիսուանում։ ԹԱՐԳՄ.

[2] Ո՛չ թէ ցանկն՝ այլ հատուածոց մէջ եղած վերնագիրք։

* Խմբագրութեանս խաւրուած յաջորդ հատակոտորքն արժանի են բանասիրաց ուշադրութեան, զորոնք կը հրատարակենք հոս ճշդութեամբ: Մ'տադրութեան արժանի են Վենետկոյ տպագրութենէն ունեցած տարբերութիւնք. (հրտ. Հ. Աբր. Վ. Ճարեան. Վենետ. 1877:) Մանրամասն համեմատութիւն մ'ընել ընթերցուածոց եւ ուղղագրական տարբերութեանց "Հանդիսիւ„ մէջ աւելորդ համարեցանք, միայն քանի մը կէտ նշանակեցինք: Հատակոտորքս Եւսեբեայ Եկեղեցական Պատմութեան Է գրոց Ա, Ե—Ը գլուխները կը բովանդակեն: ԽՄԲ.

digitised by A.R.A.R.@

## Ա. ԹՂԹԻՆ ԱՌԱՋԻՆ ԵՐԵՍԸ

### Ա. ՍԻՒՆԱԿ*

ԺԲ. Երկոտասաներորդ՝ վասն
որոց վկայեցին ի կէսարեա
Պաղստինացւոց.
ԺԳ. Երեքտասաներորդ. վասն
խաղաղութեան զոր արար
զաղիոս.
ԺԴ. Չորեքտասաներորդ. վասն ե
պիսկոպոսացն որ առաքին
ային յայնմ ի ժամանակի.
ԺԵ. Հնգետասաներորդ. թե որ
պէս վկայեաց մարեանոս ի կէ
սարեայ. Վեշտասաներորդ.
պատմութիւն վասն աստերեայ.
ԺԷ. Եւթնուտասներորդ. վասն
նշանացն որ եղեւ ի պենա
ղա** մեծամեծ զործոց փրկ
ԺԸ. չին մերոյ. Ութուտասն
երորդ. վասն աթոռոյն
ԺԹ. յակովբու. Իննուտասնեբ
որդ վասն թղթոց զոր զր
եաց դիոնեսոս. վասն տաւն
իզ եւ նոսա ասաց վասն զատկի.
Ի. Քսաներորդ, վասն ամենայն
որ ինչ անցք անցին յաղեք
սանդրիա*** քաղաքի.
ԻԱ. Քսաներորդ առաջնորդ
վասն հիւանդութեանն որ

* Հմմտ. Եւս. Դպր. Է, ցանկը (տպ. էջ 521–522:)
** Գոնէ աւելի ուղիղ է քան ի տպագրութեան "ի Պենայիոյ„ ընթը:
*** Տպ. "Ցաղեքսանդր քաղաքի:„

### Բ. ՍԻՒՆԱԿ

եղեւ յաղեքսանդրիայ.
ԻԲ. Քսաներորդ երկրորդ վասն
արքայութեանն զաղիոսի.
ԻԳ. Քսաներորդ երրորդ, վասն
նեփիտեա եւ վասն հերձու
ածոց զոր արար.
ԻԴ. Քսաներորդ չորրորդ. վասն
յայտնութեան յովհաննու.
ԻԵ. Քսաներորդ հինգերորդ.
վասն թղթոցն դիոնեսեա.
ԻԶ. Քսաներորդ վեցերորդ.
վասն պաւղոսի շամշտացոյ*
եւ վասն հերձուածոցն զոր
արար յանտիոք քաղաքի.
ԻԷ. Քսաներորդ եւթներորդ.
վասն անուանի եպիսկոպ
ոսացն որ յայտնեին** յայ
նմ ժամանակի.
ԻԸ. Քսաներորդ ութերորդ թե
որպէս յանդիմանեցաւ
պաւղոս եւ տարագրեցաւ.
ԻԹ. Քսաներորդ իններորդ, վա
սն ճախող աղանդին մամին
ացւոց.*** զի յայն ինչ յայնմ
ժամանակի սկսաւ նա.
Լ. Երեսներորդ վասն մարդկան
մանկանց եկեղեցւոյ որ ո՛(չ)****

* Տպ. "շմշտացւոյ:„
** Լաւ եւս քան տպ. "որ էին:„
*** Տպ. "Մանինացւոց որ այն ինչ Եորոգ սկսաւ յայնմ ժամանակի:„
**** Այս "ո(չ)„ անկապ կ'երեւայ, խօսքն ըլլալով "որ փառաւորեցան:„

## Ա. ԹՂԹԻՆ Բ. ԵՐԵՍԸ

### Ա. ՍԻՒՆԱԿ*

փառաւորեցան յաւուրս մ
եր, եթե որք մնացին ի նոց
անէն մինչեւ յաւերած եկ
եղեցեաց որ յաւուրս հալա
ծանացն եղեւ.
Ա Առաջին ճառք վասն զնացից չարեաց
դեկիոսեայ եւ զաղիոսեայ: —
Ջկնի դեկիոսի կալաւ զաղ†

* Այս էջը շարունակութիւն է նախընթացին եւ կը բովանդակէ Եւսեբեայ Է գրքին Ա գլուխը (տպ. էջ 525–26:) Բաւական մանր տարբերութիւնք կան տպագրէն: Խ.

### Բ. ՍԻՒՆԱԿ

եզինես, վալթսուն եւ լինն
ամ, եւ հանգեաւ.
Արդ ի ժամանակի իւրեւ զր
եաց դինոնեսոս առ հեր
մամոն, վասն զաղիոսի՝
ասէ այսպէս, զի եւ ոչ զա
ղոս ասէ, զիտէր զչարիսն
դեկոսի, եւ ոչ նաեցաւ

† Տես շարունակութիւնը յաջորդ երես:

digitised by A.R.A.R.@

իոս. յայսմ ի դպրութե
ան եւթներորդ պատմու
թեանց եկեղեցւոյ, ի սմա
դարձեալ վասատակէր ընդ
մեզ դեոնեսոս եպիսկոպ
ոս մեծ պատմութեամբք,
զոր պատմեաց քանիւք իւր
ովք, եւ թղթովք իւրովք,
ի մասունս մասունս զամե
նայն ինչ զոր միանգամ զ
ործեցաւ յաւուրս նորա.
Բայց ես աստի արարից սկ
իզբն քանիցս այսմիկ. Դեկոս
իքրեւ ոչ երկուս ամս
կալաւ զթագաւորութիւնն,
սպանաւ նա երկու որդւովքն
իւրովք հանդերձ, կալաւ զ
կնի նորա գաղիոս, յայնմ
ի ժամանակի կատարեաց ուր*

* Տես շարունակութիւնը էջ 37, Բ. Սիւնակ:

նա ընդ այն ինչ որով յան
ցեաւն նա, այլ ի նոյն իսկ
զվէմն որ եղեալն էր առաջ
ի աչաց նորա, զայթագղե
ցաւ եւ սա. զի իքրեւ յաջք
այութեան իւրում առաւել
լինէր, եւ իւքն նորա ըստ
մտաց իւրոց գործեալ լի
նէին. զմարդս սուրբս
որ աղաւթս առնեին առ Աստուած
վասն խաղաղութեան, եւ
վասն առողջութեան նորա
հալածէր. արդ ընդ նոսին
իսկ ընդ այնոսիկ հալածէր
նա զաղաւթսն եւս զոր առն
եին վասն նորա, զայս ինչ
առնէր* վասն նորա. եղեն
Բ. Երկրորդ վասն Եպիսկոպոսացն որ
յաւուրս նոցին թագաւորաց ի հռոմ
քաղաքի

* Ուղղագոյն կ'երեւայ տպ. "ասաց":

## Բ. ԹՂԹԻՆ ԱՌԱՋԻՆ ԵՐԵՍԸ

### Ա. ՍԻՒՆԱԿ*

Ասաց իսկ վասն ստեփանիա
այսպէս, եթե առաքեաց
աստ յառաջագոյն, եւ
վասն հեղանոսեա, եւ վա
սն պարմեղեա. եւ զկնի ամ
ենեցուն որ եին ի կողմանս
կիւղիկեցւոց, եւ կապու
դակեցւոց.** յայտ է թե եւ
ի կողմանս գաղատացւոց,
եւ ամենայն հեթանոսաց,
որ սահմանակիցք են նոցա.
որպէս զի եւ ոչ ընդ նոսա
հաղորդէր նա, վասն այսր
պատճառանացս, եւ վասն
զի մկրտեին աստ վերստին
զհերեսիոտայսն, եւ տես
դու զմեծութիւն այսր իրաց,
որպէս ուսա ես ճշմարտիւ,
հերձուածք եղեն վասն այս

* Ցաջորդ գլխին նայելով այս հատուածն Բ.Ի.Ա. գերորդ գլուխ է, սակայն սկիզբէն պակասաւոր:
Տ. Վ. Պ.

* Հատածս է Եկղ. Պատմ. Է դպրութեան հին-գերորդ եւ վեցերորդ գլխէն (տպ. 529—30): Ե. գլխին սկիզբէն քանի մը տող միայն պակաս է:

** Տպ. "Կապադովկացւոյ", նորագոյն:

### Բ. ՍԻՒՆԱԿ†

վասն այսր ամենայնի. գր
եցի եւ աղաչեցի զնա, եւ զ
կնի այլոց դարձեալ.
Նա եւ առ սիրելիսն մեր, եւ առ
պաշտաւնեակիցսն մեր երի
ցունս, դիոնեսոս, եւ փիղ
իմոնս, զի են նոքա յառաջ
ագոյն խորհրդակիցք ստե
փանիա որ գրեցին առ իս վ
ասն այսր ամենայնի. յառ
աջ գրեցի ես առ նոսա սակ
աւ մի. իսկ այժմ բազմաւք
գրեցի եւ նոցա. այս ինչ է
վասն այսր արատոյ զոր գր
եցաք մեք վասն նորա.
Գ. Վեցերորդ վասն աղանդին սաբիզայ*
Այլ ցոյց նա այսու հանդ
երձ վասն հերձուածոցն
եւս տանն սաքեղիա. որ յաւ

† Տես շարունակութիւնը էջ 39, Ա. Սիւնակ:
* Տպ. "Սիքեղեայ":

*սր ի ժողովս մեծամեծ եպիս
կոպոսացն, եթե որ միանգ
ամ մերժենայ աղանդոց սն
տի, եղիցի նա աշակերտել
զնոսա, եւ սրբեսցին նո
քա յաղտոյ անտի, եւ ի նե
խուտ հին խմորոյն, եւ**

* Տես շարունակութիւնը, էջ 38, Բ. Սիւնակ:

*ուրս նորա երեւեցան.՛ եւ
ասէ այսպէս, վասն այսր
աղանդի որ այժմ երեւեցաւ
ի պտողեմայիդ պանդողաց
ւոց, միտք ամպարշտութե
ան լի՛ է հայհոյութեամբ.
զաստուծոյ ամենակալէ հաւրէ տն
մերոյ յի. քի. եւ քազում երկ*

## Բ. ԹՂԹԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԵՐԵՍԸ

### Ա. ՍԻՒՆԱԿ*

*կայնամնութիւն ունի նա
վասն որդւոյ նորա միածն
ի. անդրանկանն ամենայն
արարածոց. քանն որ զգեց
աւ զմարդկութիւնն. եւ
անգիտութիւն վասն հոգւ
ոյն սրբոյ. եւ իբրեւ եկին
յեկեղեցւոց կողմանց առ
իս, մինչչեւ առեալ էր
իմ զթուղթսն. եւ մինչչեւ
խաւսեալ էր ընդ իս եղբարց
գրեցի ես ետու տանել որպէս
եւ կարացի. Զաւրութեամբն
զոր ետ ինձ աստուած. եւ իբրեւ
վարդապետութեամբ պատ
մեցի եւ զիրսն: եւ զպատ
ճեն սոցա ետու բերել քեզ.*

Է. *Եւթներորդ վասն պիղծ մոլորութե
ան հերեսիոտից եւ վասն տեսլեանն
որ երեւեցաւ յաստուծոյ դիոնեսեայ,
եւ
վասն կանոնացն եկեղեցւոյ զոր ըն-
կալաւ:*

*Եւ յերրորդ թղթի անդ որ
վասն մկրտութեանն է զոր
գրեաց դիոնեսոս, առ փի
ղիմոյն երէց ի հռովմ
քաղաքի, եւ դնէ զայս.
Զի ես ասեի** խաւսս եւ տու*

* Շարունակութիւն է դպրութեան Զ գլխին եւ Ը գլ. (տպ. 530—532:)

** Պէտք է ընթեռնուլ “ասէ, ի խաւսս . . .„

### Բ. ՍԻՒՆԱԿ

*չութեանս հերեսիոտայ
ընթերցա,* բայց թէպէտ
աղտեղեցի զանձն իմ.
պիղծ խորհրդովք նոցա.
առ ժամանակ մի. սակայն
աւգուտ զայս առի ի նոցանէ,
զի յանդիմանեալ կշտամբե
ցի զնոսա առանձինն. եւ
առաւել յոյժ խոտեցից ան
արգեցից զնոսա. այլ ի ժա
մանակի իբրեւ եղբայր մի
յերիցանց անտի արգելոյր զիս
զի երկուցեալ զահի հարե
ալ էր նա. եթե գուցէ խառն
եցա ես ի տիղմ չարութեան
նոցա, զի ասէր նա եթե ա
պականես զանձն քո, եւ
հաստատեալ գիտացի ես եթե
ճշմարիտ ասէր նա.
Յայնժամ երեւեցաւ ինձ*

*տեսիլ աստուծոյ, եւ երազեցոյց*

*զիս, քան իսկ եղեւ ի վերայ
իմ. եւ հրամայեաց ինձ յայ
տնապէս, եւ ասաց եթե ամ
ենայնի որ գայցեն ի ձեռս քո,
եղիցիս ընթեռնուլ զնոսա.
քանզի կարող ես դու քննել*

* Տպ. ուղղագրին՝ “ընթացայ„:

## Գ. ԹՂԹԻՆ Ա. ԵՐԵՍԸ

### Ա. ՍԻՒՆԱԿ*

*եւ զամենեսին եւ յանդի
մանել, զի եւ քեզ պատճառք
ի հաւատս եղեն. եւ ընկալաւ†*

* Շարունակութիւն է նախընթացին մինչեւ Է:

### Բ. ՍԻՒՆԱԿ

*սակայն ոչ ընկալաւ զնոս
ա, մինչեւ խոստովան եղ
են ամենայն ժողովրդեանն.*

† Տես շարունակութիւնը, էջ 40, Ա. Սիւնակ:

digitised by A.R.A.R.@

*ես զայս տեսիլ, զի հաւատա*
*ցել միաբանին առաքելոյ*
*զոր ասաց առ հզաւրս, եթէ եղե*
*րուք վաճառականք փորձե*
*ալք, եւ յետ այսորիկ յաւ*
*ելու եւ ասէ, վասն ամենայն*
*աղանդին հերձուածոյ այս*
*պէս, զի ես ասէ զայս կան*
*ոնս զաւրինակս հերակղիա*
*եպիսկոպոսի երանելոյ ըն*
*կալայ, զի զայնոսիկ որ մե*
*րձենային առ նա, յաղանդ*
*ոց անտի, որ պատառեցան*
*յեկեղեցւոյ անտի, եւ ոչ*
*իսկ պատառեցին նոքա այլ*
*կարծեալ երեւին նոքա թե*
*ժողովին ընդ նոսա, իսկ իք*
*րեւ ցուցին վասն նոցա ե*
*թե մերձեցան նոքա առ ոմ*
*անս յայսցանէ, որ ուսու*
*ցանեն զաւտար ուսմունս*
*հալածեաց զնոսա յեկեղե*
*ցւոյ, եւ իբրեւ աղաչէին*
*եւ խնդրեին ինմանէ.†*

*եւ ասացին զամենայն ինչ*
*զոր միանգամ՟ լուան նոքա.*
*յայնցանէ որ հակառակ կա*
*ցին ընդդէմ՟ եկեղեցւոյ.*
*եւ ապա ժողովեաց զնոսա առ*
*ինքն, եւ ոչ ալիտոյ եղեւ*
*տալ նոցա կնիք, քանզի*
*առեալ էր նոցա ի նմանէ,*
*յառաջագոյն կնիք սուրբ,*
*Բայց դարձեալ հմուտ եւ տե*
*ղեակ էր նա ճառիցն առաւ*
*ել, եւ յաւել եւ ասաց այս*
*պէս, զի ուսա ես ասէ եւ զ*
*այս, եթե ոչ այժմ՟ ափրի*
*կացիքն միայն մուծին*
*զայս, այլ եւ յառաջագո*
*յն ի ժամանակս եպիսկոպ*
*ոսացն, որ էին յառաջ քան*
*զմեզ յեկեղեցիսն որ լի ե*
*ին մարդկամբ, եւ ի ժողովս*
*եղբարցն մերոց որ եղեն*
*յիկոնիա հանդերձ այլովք.*
*Նաեւ բազմաց իսկ հաճոյ եղ*
*եւ այս, զի զկամն սոցա*

ղպրութեան Ը գլխին զբեթէ վերջերը (տպ. 532—533.) որ Կ'աւարտի յաջորդ էջին վրայ: Տող 1ին սկզբան "եղ„ վերջաւորութիւնը կրկնուած ըլլալու է "քննել„ բային:

† Տես շարունակութիւնը նախընթաց երես:

## Գ. ԹՂԹԻՆ Բ. ԵՐԵՍԸ

### Ա. ՍԻՒՆԱԳ

*որ շրջէ ի հակառակութիւն*
*արկանէ զնոսա յայնմիկ*
*զի ոչ միաբանին նմա.*
*Ասացեալ իսկ է եթե մի փոխ*
*եր զաւհմանս ընկեր քո,*
*զոր եդին հաստատեցին*
*հարք քո, բայց մի ի թղթ*
*ոյ անտի նորա է վասն մկր*
*տութեան, զրեաց առ դի*
*ոնեսոս որ էր ի հռովմ՟ քաղ*
*աքի, զի յայնմ՟ ժամանակ*
*ի երէց էր նա, որ յետ սակ*
*աւ ժամանակի կաց, կալաւ*
*նա զեպիսկոպոսութիւն*
*նոցա, եւ ի նմանէ մեք զիտ*
*եմք ճանել*, եթե որպիսի*
*վկայութիւն վկայեաց ի վե†*

### Բ. ՍԻՒՆԱԳ

*փոխանակ զի պատառեաց*
*նա զեկեղեցի, եւ ձգեաց*
*զոմանս յեկեղեցւոյ*
*յամբարշտութիւն եւ ի հա*
*հոյութիւնս, եւ ի վերա աստուծոյ*
*աղանդ անարժան քարոզ*
*եաց, եւ ի վերայ տն. մերոյ*
*յի. քաղցրութեան զրպար*
*տէ զնա, որպէս եթե չէ նա*
*ողորմած, եւ հանդերձ այ*
*սու ամենայնիւ որ զրկէ զ*
*լանայ նա զմկրտութիւնն*
*սուրբ, եւ կործանէ նա զհաւ*
*ատս եւ զխոստովանութիւն*
*որ յառաջ էր քան զնա եւ*
*փախուցանէ յանձանց իւր*
*եանց սպառ սպուռ զհոգ*

* Գուցէ "ճառել„: — Ուղիղն է "ճանաչել„ ըստ տպագրին:

† Տես շարունակութիւնը, էջ 41:

digitised by A.R.A.R.@

րայ նորա դիմնեսոս աղ
եքսանդրացի. զի էր նա
սքանչելի եւ կորովի բանիւք: —
Ը. Ութերորդ վասն երկմտու
թեան աղանդին նեստորեայ:*
Բայց գրեաց նաեւ համդերձ
այղովք, յիշեցուցանէ
եւ վասն նեստորեայ այսու
բանիւք, եթե զնեստորիա
յիրաւի ասէ առեմք մեք զնա:†

ին սուրբ, թեպէտ եւ էր ի
նոսա յոյս մեծ, եւ դառ
նալ առ անձինս իւրեանց.
եւ միւս եւս գրեալ է նորա,
առ քսեսղոս Եպիսկոպոս
Հռոմ քաղաքի, զի նմա ասա
ցեալ է նորա բազումն ինչ.
վասն հերեսիոտից, եւ
ղնէ զիրսն որ գործեցան
առ նմա այսպէս: —*

* Թերեւս «Նեստորեայ» էր գրուած, տպ. «Նեստո-րեայ» խօսքը Նովատիանոսի վրայ է:

* Պաւլոսի ճշիւ Ը դար. Ը գլխոյն վերջը:
† Տես շարունակութիւնը, էջ 40, Ա. Սիւնակ:

# ԲԺՇԿԱԿԱՆ

## 22.

## ԺԱ. ԱԽՐԱՊԱՑԻՆ (ԴԵՂԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ)

(Շարունակութիւն։)

Նորերումանէին խուզարկութեան ձեռնարկած ժամանակնիս, նոյն Մատենին վրայ ընդհանուր տեղեկութիւն տալու մտօք՝ այնպիսի ակնարկութիւններ ըրած ենք, որոցմէ կրնայ իմացուիլ անոր կարեւորութիւնն թէ մատենագիտական եւ թէ բանասիրական տեսակիտէ։ — Վերագոյն՝ Ա. եւ Բ. խմբի բաժանեալ՝ մէջ բերուած Օրինակներէն դիտած են անշուշտ Մատենագէտք բժշկականութեան թէ ինչպիսի ճոխ գանձարան է իրենց համար Մատեանս։ Բայց նուազագոյն չէ բանասիրաց համար ալ՝ հայեցմամբ ոճոյ եւ լեզուի՝ մանաւանդ Ա. Մասին կարեւորութիւնն, զոր դիւրին է տեսնել գլխաւորաբար Բ. խմբին օրինակներէն։

Արդեամբք իսկ նոյն Ա. Մասին լեզուն, ինչպէս նաեւ լեզու ոչ սակաւ Հատուածոց Գ. Մասին, այնպէս գեղեցիկ է, որ ընդհանրապէս խօսելով, եթէ չըսենք բովանդակ Մատեանն, գոնեայ ամբողջ Ա. Մասն եւ կիսով չափ Գ. Մասն, կրնան նկատուիլ իբրեւ մի յընտրելագոյն յիշատակարանաց ռամկօրէն գրականութեան։ Եւ ոչ միայն այսչափ՝ այլ նաեւ հնար է հաստատել թէ ձեռագրին մեծի մասին լեզուն՝ — չքնաղ վայելչութեամբն, դարձուածոց գեղեցկութեամբն, սասցուածոց ընտրութեամբն, ընտանեկան-ժողովրդական բառից եւ բացատրութեանց հնութեամբն . . . — այնպիսի է՝ որ չի գտնուիր մեզի ծանօթ ռամկական գրուածոց մէջ՝ ոճոյ եւ լեզուի հայեցմամբ՝ այսմ նախամեծար ընելու այլ գրութիւն, եւ հազիւ թէ սակաւաւորք կան հաւասար գծի վրայ դնելու[1]։

[1] Հարկ կը համարինք ծանուցանել՝ թէ ինչ է պատճառն, որ այսպիսի առաջնակարգ Մատենի մը վրայ՝ այնպէս խօսեցանք, որպէս թէ երկրորդական կարգի գրութիւն ըլլար։ Իրաց այս երեւոյթն առնուլն՝ մեզմէ անկախ պատճառի հետեւանք է։ Մենք Փարիզու Ազգային Մա-

Առացելոցս ի հաստատութիւն՝ յառաջագոյն գրուածներուն վրայ կը յաւելունք այլ եւս քանի մի Օրինակ՝ Մատենին Ա. Մասէն առնլով, եւ իւրաքանչիւրին առ երի դնելով իրեն համապատասխանող կտորներն՝ որ յայլ բժշկական գրութիւնս կը գտնուին։ Եւ թէպէտ այս վերջնոյ ընթերցուածքն մեծաւ մասամբ արդէն առատ անդ հաղորդած ենք, սակայն նորէն կը կրկնենք. որպէս զի ընթերցողք կարենան լաւ եւս դիտել երկու ընթերցուածոց տարբերութիւններն։

Գ. Խումբ. Համեմատական Օրինակք։

1.

| Ըստ ընթերց. Երեւանեան։ | Ըստ ասորական ընթերց։ |
| --- | --- |
| Վասն Մանախուլայի որ է ասորայն լինի։ | Վասն Մանախուալէայէն որ է ասորայն դեղն մարդայ։ |
| Բուփաս ասացել է՝ թէ ի բլղամէ լինի, եւ իրաւ է ասցել։ Եւ մանախոլային նշանքն այս է. յառաջ քան (պաճնայն) մարդն զկերակուրն չկարէ հալել, եւ թէ շատ ուտէ եթէ քիչ՝ կշտերն ուռչի եւ քամի ընկնի, եւ զմարդոյն յիմացքն քիչ քիչ տանի, եւ հանց տանի՝ որ մարդն չիմանայ եւ չաւատայ՝ թէ իմ բժշկութիւն կայ, եւ զինքն կախարդած գիտենայ, եւ բժշկի չաւատայ եւ ոչ դեղի՝ թէ իմ դեղ կայ. եւ այնց գիտենայ՝ թէ յեգենն մեռնի կամ յիրիկունն։ Եւ զինչ ուտէ՝ հալել չկարէ. ներքու եւ տապի, եւ սրգեւոտկայ կէս թթու կէս հոտած ձկան հոտով, եւ կէս այնց գիտենայ թէ ա- | Բուբաս բժշկապետն ասացեալ է՝ թէ ի պալղամէ լինի եւ յարենէ. եւ իրաւ է. զի իւր նշանքն այն է՝ որ երբ մարդն զկերակուրն ուտէ՝ չկարէ հալել, եւ թէ շատ ուտէ եւ թէ սակաւ՝ կշտերն ուռչին եւ հետ ի հետ զմարգոյն իմացքն տանի։ Եւ հանց լինի՝ որ չի հաւատայ թէ իւրն բժշկութիւն լինի. եւ զինքն կախարդած գիտենայ կամ դեղած, եւ ոչ բժշկի հաւատայ եւ ոչ դեղի, եւ հանց գիտենայ՝ թէ կո՛մ վաղն մեռանի եւ կամ երիկունն, եւ ներքի եւ տապի, եւ ձգեռատուկն գայ ժամ մի թթու եւ ժամ մի հոտած եւ ձկնահամ։ Եւ ժամ մի հանց գիտենայ՝ թէ արիւնահամ ընդ բե- |

տենադարանին վարչութենէն միահաղոյն խնդրած էինք 106, A. եւ 108 թուով ձեռագիրներն։ Բաւական չուս ընդունեցանք զԹ. 108, իսկ զԹ. 106, A. շատ աւելի ուշ, որով կամացս հակառակ ստիպեցանք երկրորդական գրից մէջ գործածել զՄատեանս, զոր եթէ կանխագոյն ի ձեռին ունենայինք՝ իւր ծանրակշռութեան համեմատ կը կարգադրէինք Դեղագործութեան ամբողջ Հոծն։

digitised by A.R.A.R.@